CALIFORNIANS PROUD TO Bear Responsibility FOR OUR STATE

ԸՆՏԱՆԻՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆԴԱՄ
ՊԵՏՔ Է ԿՐԻ ԱՅՍ ՏՈՄՍԸ

## ԱՂԵՏԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տեղական Հրատապ Ծառայությունների Գրասենյակի հեռախոսահամար

____________________

Հրատապ Հանդիպման Վայր (ձեր տնից դուրս)

____________________

Հանդիպման վայր (ձեր շրջակայքից դուրս)

____________________

Հեռախոս ____________________

Հասցե ____________________

____________________

Ընտանիքի կապ (անուն) ____________________

Հեռախոս (ցերեկային) ____________________

Հեռախոս (երեկոյան) ____________________



Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություն, խնդրում ենք այցելեք՝:

Governor's Office of Emergency Services
(Կառավարչի Հրատապ Ծառայությունների Գրասենյակ)
http://www.oes.ca.gov

California Service Corps
(Կալիֆորնիայի Սպասարկման Մարմին)
http://www.csc.ca.gov

American Red Cross (Ամերիկյան Կարմիր Խաչ)
http://www.redcross.org

Fire Safe Council
(Հրդեհի Դեմ Ապահովության Խորհուրդ)
http://www.firesafecouncil.org

CALIFORNIANS PROUD TO Bear Responsibility FOR OUR STATE

California Service Corps

American Red Cross

FireSafe Council

California State Alliance

Safeway Vons SBC

Armenian

*Կալիֆորնիա՛ Խելացի Եղիր,*
*Պատասխանատու Եղիր, Պատրաստ Եղիր: Պատրաստվի՛ր:*



# 10 միջոցներ ոդպեսզի ԴՈՒՔ լինեք ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՂԵՏԻ ԴԻՄԱՑ



*Կալիֆորնիայի Առաջին Տիկինը*
*Maria Shriver*

Պատրաստ կլինե՞ս արդյոք, երբ աղետը հարվածի: Գիտե՞ս ինչ պետք է անել: Ծրագիր ունե՞ս: Հրշեջ, ոստիկանական և շտապ բժշկական ծառայությունները թերևս ուշ արձագանքեն քեզ: Դու պետք է իմանաս, թե ի՞նչ է պետք անել, ծրագիր ունենաս և պատրաստ լինես ինքդ քեզ, քո ընտանիքին և քո համայնքին հոգատարելու:

Կալիֆորնիայում, և՛ անտառային հրդեհների, և՛ երկրաշարժների ու ձմեռնային փոթորիկներ դեպքում, խնդիրը աղետի հարվածել կամ չհարվածելը չէ, այլ՝ ե՛րբ հարվածելը: Ոսկյա նահանգը դիմագրավում է բնական աղետների իր բաժինը և նա որոշապես ենթակա է ահաբեկչական հարձակումների:

Պարտավոր ես պատրաստ լինել: Երբ պատրաստ լինես, Կալիֆորնիան ևս պատրաստ կլինի: Շնորհակալություն քո բաժինը կատարելու համար:



ARM_BeSmartBroch5-05.indd 1 7/1/2005 8:48:01 AM

# ՔԱՅԼԵՐ ԱՌԵՔ ԱՅՍՕՐ ԵՎԵԹ

## և պատասխանատվություն կրեք պատրաստ լինելու համար



### 1 ՃԱՆԱՉԵՔ ՁԵՐ ՎՏԱՆԳԸ

Ի՞նչ են ձեր բնակած և աշխատած վայրի վտանգները: Ստուգեք, թե ինչպիսի՞ բնական և մարդկային աղետներ վտանգ են ներկայացնում ձեզ համար: Արդյո՞ք բնակվում կամ աշխատում եք ողողումների դաշտում, հզոր երկրաշարժի գծի մոտ, կամ հրդեհի բարձրավտանգ շրջանում: Պատրա՞ստ եք արդյոք մարդկանց գործած անսպասելի աղետների դեմ, որոնք կարող են հարվածել ցանկացած պահի: Ձեր շրջակայքը կամ համայնքը ունի՞ աղետի ծրագիր:

- Ձեռք բերեք ձեր տեղական Հրատապ Ծառայությունների Գրասենյակի (OES) համարը կամ կապ հաստատեք Ամերիկյան Կարմիր Խաչի ձեր տեղի մասնաճյուղի հետ և դարձեք իրազեկ:
- Ձեր ապահովագրական ընկերությունից ստուգեք, որ ձեր տունը գտնվո՞ւմ է հրդեհի, ողողման կամ երկրաշարժի բարձրավտանգ շրջանում: Ձեր ապահովագրական ծածկույթը միշտ թարմ պահեք տարեց տարի:

### 2 ՍՏԵՂԾԵՔ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

*Ձեր ընտանիքին հարկավոր է մի ծրագիր, որը յուրաքանչյուրին ասի՝:*

**Որտե՞ղ հանդիպել եթե հարկադրվեք հեռանալ տնից:** Նշանակեք ձեր տնից դուրս մի վայր, որտեղ ընտանիքի անդամները կարող են գնալ: Ունեցեք ձեր շրջակայքում մի երկրորդական հանդիպման վայր՝ այն դեպքում, որ առաջին հանդիպման վայրը մատչելի չլինի: Ստուգեք, թե ձեր երեխաների դպրոցները և ցերեկային խնամք մատակարարողները կամ խնամատուները ունե՞ն աղետի ծրագիր և ծնողների հետ անցկացնո՞ւմ են տարեկան «աղետի վարժություններ», որպեսզի երաշխավորեն ձեր երեխաների ապահովությունը: Հեռախոսեք ձեր տեղի OES գրասենյակ, որպեսզի իմանաք ձեր համայնքում առաջարկվող հանդիպման վայրերի մասին:



**Ո՞ւմ եք նշանակել որպես ձեր արտանահանգային ընկերոջ, որը դառնա ձեր «ընտանեկան կապը»,** որպեսզի բոլորը նրանից ստուգեն: Աղետից հետո հաճախ ավելի հեշտ է միջքաղաքային հեռախոսակապով կապ հաստատելը:

**Ինչպե՞ս կարևոր տեղեկություններ ձեռք** բերել ձեր համայնքում և ինչպե՞ս խոսել ընտանիքի անդամների հետ՝ իրարից բաժանվելու դեպքում: Ամբողջովին իրազեկ լինելու համար՝:

- *Իմացեք, թե ո՞րն է ձեր շրջանում աղետը ազդարարող ռադիոկայանը: Ունեցեք հեշտ Տեղափոխելի մի ռադիո, պահեստի էլեկտրաբարդերով, որպեսզի ձեր ընտանիքին մատչելի լինեն կարևոր տեղեկությունները ձեր համայնքում հրատապ արձագանքի ջանքերի մասին:*
- *Պահեք հպովի կոճակներով մի հեռախոս, որի համար էլեկտրական միակցում չի պահանջվում: Ընդգրկեք համապատասխան լարը, որով հեռախոսը միանում է տնային հեռախոսագծին: Աղետից հետո բջջային և անթել հեռախոսները թերևս չգործեն: Եթե կարողանաք, օգտագործեք ձեր հպովի կոճակներով հեռախոսը՝ կապ հաստատելու ձեր արտաքաղաքային ընտանեկան կապի հետ: Փորձեք խոսել կարճ և կենտրոնացված՝ երբ կապ հաստատեք ձեր արտաքաղաքային կապի ընտանքի անդամների հետ: Հեռախոսագծերը հրատապ արձագանքի խմբերի համար հաղորդակցության թանկագին միջոցներ են:*
- *Եթե ձեր մեքենայում եք, գտեք մի ապահով վայր, ձեր մեքենան կանգնեցրեք այդտեղ և մնացեք նրա մեջ: Միացրեք մեքենայի ռադիոն, որպեսզի կարևոր տեղեկություններ ստանաք որտեղ գնալու և ինչ անելու մասին:*

**Ինչպե՞ս հոգ տանել ձեր ընտանի անասուններին:** Նրանց համար մթերեք ջուր և սնունդ ձեր աղետի լրասարքում: Նրանց վզին անցկացված ցուցանակները պահեք թարմ և հեռախոսեք ձեր տեղի OES գրասենյակ, որպեսզի տեղեկություն ձեռք բերեք աղետի պահին կամ նրանից հետո ձեր ընտանի անասունների համար ժամանակավոր ապաստան գտնելու մասին:



### 3 ՓՈՐՁԱՐԿԵՔ ՁԵՐ ԱՂԵՏԻ ԾՐԱԳԻՐԸ

Ձեր ընտանիքի հետ հավաքաբար ձեր ծրագիրը մշակելուց հետո, ծորձե՛ք այն: Սկսեք ընտանիքի անդամներին հավաքելով ձեր տնից դուրս նշանակված վայրում,- ինչպես կանեիք հրդեհից կամ ցնցումները դադարելուց հետո: Իմացեք ինչ անել աղետի դեպքում՝ անշարժ սպասել տա՞նը, թե՞ մեքենայով հեռանալ ձեր շրջակայքից: Եթե ձեր ընտանիքը հարկադրվի հեռանալ, իմացեք տնից հեռանալու պատշաճ ընթացակարգերը և ճանապարհները, այնպես ինչպես որոշվել են ձեր տեղի OES կողմից:

### 4 ՁԵՐ ՏԱՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԵՔ ԱՂԵՏԻ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԼՐԱՍԱՐՔ

Եթե արգելափակվել եք ձեր մեքենայում կամ մինչև օգնության հասնելը հարկադրված եք ինքնաբավ լինել ձեր տանը, պարտավոր եք աղետի լրասարք ունենալ ձեզ մոտ: Ձեր տան աղետի մթերքների լրասարքը պետք է բաղկացած լինի առնվազն հետևյալներից, որոնք պահված լինեն դյուրամատչելի արկղներում կամ հեշտությամբ փոխադրելի ուսապարկերում, պլաստիկե տոպրակներում կամ անվավոր աղբամաններում: Մի ավելի ծոքր լրասարք պահեք ձեր մեքենայում:



- Ունեցեք առնվազեն 3 օր բավարարող չժամկետանցվող պահածո ուտելիք և ջուր ընտանիքի բոլոր անդամների համար: Ջուրը թարմացրեք յուրաքանչյուր վեց ամիսը մեկ: Չոռանաք ուտելիքները վերապահեստավորել:
- Նախնական դարմանումի լրասարք:
- Էլեկտրաբարդով գործող լապտեր և շարժական ռադիո՝ լրացուցիչ էլեկտրաբարդերով: Էլեկտրաբարդերը թարմացրեք կանոնավոր պարբերականությամբ:
- Փոխարինող հագուստ և կոշիկ, ինչպես նաև մի ծածկոց կամ քնապարկ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար:
- Մեքենայի բանալիների կրկնօրինակներ և վարկատոմս ու կանխիկ ծող:
- Լրացուցիչ դեղեր:
- Առողջապահիկ մթերքներ (օճառ, լվացող մթերքներ, շամպու, զուգարանի թուղթ, ևայլն):
- Դեղատոմսային ակնոցների կրկնօրինակ:
- Ընտանիքի կարևոր ծաստաթղթերը պահեք անջրանցիկ արկղում:



### 5 ՊԱՏՐԱՍՏԵՔ ՁԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Ձեր երեխաներին խոսեք վտանգների և ձեր ընտանիքի անելիքների մասին աղետը հարվածելու դեպքում: Ձեր աղետի ընտանեկան ծրագիրը ծորձարկեք յուրաքանչյուր վեց ամիսը մեկ: Ձեր երեխաներին հնարավորություն տվեք, որ մասնակցեն ընտանեկան ծրագիրը մշակելուն, աղետի մթերքները կազմելուն և վարժությունները ղեկավարելուն: Որքան ավելի երեխաները իրազեկ և մասնակից լինեն աղետի ծրագրմանը, այնքան ավելի լավ պատրաստված կլինեն:

### 6 ՄԻ ՄՈՌԱՑԵՔ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ

Նորածիններին, տարեցներին և հատուկ կարիք ունեցող անձերին չպետք է մոռանալ: Ձեր լրասարքում ունեցեք ձեր նորածնի համար մթերքներ, ինչպես նաև դեղեր, թթվածնի արկղիկ կամ այլ բժշկական մթերքներ, որոնք պետք կգան տարեցներին կամ անկարող մարդկանց: Ստուգեք, որ առնվազն 3 օր բավարարող մթերքներ ունենաք հատուկ կարիքների համար: Ստուգեք, որ ապրելուն աջակցող հաստատությունը, որտեղ բնակվում է ձեր ընտանիքի անդամը, ունի աղետի ծրագիր և դուք ծանոթ եք դրան:

### 7 ՍՈՎՈՐԵՔ ՉՊՐ-Ը ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՐՄԱՆՈՒՄԸ

Ձեր տեղի Ամերիկյան Կարմիր Խաչի մասնաճյուղին դիմելով մարզվեք նախնական դարմանումի և CPR համար: Ձեր մարզումի շնորհիվ կկարողանաք փրկել ձեր հարազատի կամ հարևանի կյանքը աղետի դեպքում:



### 8 ՉԵԶՈՔԱՑՐԵՔ ՎՏԱՆԳՆԵՐԸ ՁԵՐ ՏԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

Ամրացրեք ձեր տան կամ գրասենյակի մեջ գտնվող իրերը, որպեսզի նվազեցնեք վտանգները, հատկապես երկրաշարժից կամ պայթյունից առաջացած ցնցումի դեպքում: Էլեկտրական խոշոր սարքերը ամրացրեք հատակին, ապահով ծակեք պահարանների դռները, բարձրահասակ կահույքը խարսխեք, ամրացրեք գլխավերևի իրերը, ինչպես՝ առաստաղի հովհարները և նկարները:

Եթե բնակվում եք հրդեհի բարձրավտանգ շրջանում, նաև քայլեր առեք ձեր տունը պաշտպանելու անտառային հրդեհների դեմ: Ստուգեք, թե ինչպես ձեր տունը կարող եք զերծ պահել հրդեհից՝ դիմելով ձեր տեղի հրշեջ բաժանմունքին կամ Կալիֆորնիայի Անտառների Բաժանմունքի և Հրդեհի Դեմ Պաշտպանության հաստատության:

### 9 ՀԱՍԿԱՑԵՔ 9/11-ԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Քիմիական կամ թունավոր նյութի,- կամ ռումբի և պայթուցիկների,- ենթարկվելու դեպքում՝ խուճապի մի՛ մատնվեք:

- Եթե մի պայթյուն լսեք, պահվտեք ամրապինդ սեղանի տակ, ընկնող իրերից հեռու: Այնուհետև դուրս եկեք ամենայն արագությամբ:
- Եթե հրդեհ կա, մնացեք ցածր, թաց լաթով ծածկեք ձեր քիթն ու բերանը, և որոնեք փախուստի մի ճանապարհ՝ տաքից և բոցերից հեռու:
- Եթե փլակատարները թակարդել են ձեզ, թաշկինակով կամ լաթով ծածկեք ձեր բերանը, որպեսզի խուսափեք փոշի շնչելուց: Սուլեք կամ խողովակներին կամ պատերին թփթփացրեք հրավիրելու փրկարարների ուշադրությունը: Մի՛ գոռաք. խնայե՛ք ձեր ուժը:
- Եթե կարծում եք, որ ենթարկվել եք քիմիական կամ կենսաբանական նյութերի, ամենայն արագությամբ դիմեք բժշկի կամ բժշկական կլինիկա:

### 10 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԵՔ, ԿԱՄԱՎՈՐԱԳՐՎԵՔ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՔ

Արդյուն նվիրեք, միացեք տեղական Համայնքի Հրատապ Արձագանքի Խմբին (CERT)՝ կապ հաստատելով Կալիֆորնիայի Սպասարկման Մարմնի հետ, կրթեք ձեր հարևանը, այսօր իսկ կամավորագրվեք միանալով ձեր տեղի Ամերիկյան Կարմիր Խաչին, Հրդեհի Դեմ Ապահովության Խորհրդին և ձեր շրջանի այլ կամավոր կազմակերպությունների: Արեք ինչ որ ուզում եք՝ մասնակցելու, ներգրավվելու և պատասխանատվություն կրելու մեր նահանգի համար: